Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԸ

ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿ. ԴՊՐԱՆՈՑՈՒՄ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ «ԱՐԱՐԱՏ»-Ի.

Երևանի եկեղեցին և դպրանոցը ոգևորութեամբ տօնեց իւր խնկելի նահատակաց յիշատակը։ Եկեղեցում սովորական պատարագն աւարտելուց յետոյ՝ հոգեհանգստեան կարգ կատարուեցաւ ի յիշատակ դրպրանոցիս և եկեղեցու բարերարների նախնի սովորութեան համաձայն, որից յետոյ Սրբազան Սուքիաս Արքեպիսկոպոսը մի համառօտ քարոզ խօսեց, օրհնելով բարերարների անունը և նոցա յիշատակն էլ կապելով Վարդանանց սրբոց յիշատակի հետ։ Պատարագից յետոյ Ս.Արքեպիսկոպոսը առաջնորդարան իջաւ հանգստանալու, մինչ դպրանոցիս տեսուչը մի քանի ուսուցիչների օգնութեամբ կարգադրութիւններ էր անում հանդիսի կանոնաւորութեան համար, որ պէտք է դուրսը դպրանոցի առաջ ս. Սարգիս եկեղեցու բակում կատարուէր։ Եղանակը հրաշալի էր և շատ նրպաստեց հանդիսի շքեղութեան։ Կարճ ժամանակից եկեղեցու բակն լցուած էր հանդիսականներով։ Առանձին տեղ էր պատրաստած Սրբազան Հօր համար, առանձին տեղ՝ պատուարժան հոգաբարձուների և դպրանոցիս յարգելի ուսուցիչների համար։ Հանդիսականների համար ևս աթոռներ կային, բայց ոչ այնքան, որ բոլորին բաւականացնէր. այնպէս որ շատերը կանգնած էին, կանգնած էին նաև դպրանոցիս աշակերտները։ Ուսուցիչներից մի քանիսը և ոմանք մեծ աշակերտներից հսկում էին կարգ ու կանոնի վերայ։

Ամբիոնը դրուած էր դպրանոցի մուտքի առաջ սանդուղքների վերայ, իսկ դռան վերև կախած էր ս. Վարդանայ նկարը։

Հանդէսը բացուեցաւ սովորական աղօթքով, որին հետևեց «Նորահրաշ» շարականը նուագածութեամբ։ Այս նորութիւնը և գեղեցիկ ներդաշնակութիւնն, որով երգեցին աշակերտներն այս հոգևոր երգը, մեծ տպաւորութիւն գործեց հանդիսականների վերայ։

Ապա բեմ եկաւ դպրանոցիս ուսուցիչ պ. Հ. Աբովեանը, որ մի գեղեցիկ ուսումնասիրութիւն կարդաց։

Պ. Աբովեանի ուսումնասիրութեան հետևեց դպրանոցիս Զ. դասարանի աշակերտ Մ. Մուրադեանի ճառը. «Վարդանանց պատերազմի նկարագիրը». խօսում էր զգացուած, զգացուեցան նաև ունկնդիրները։

Ճառից յետոյ ասուեցան տօնին համապատասխան ոտանաւորներ. իսկ հանդէսն ամփոփեց դպրանոցիս Տեսուչ՝ Բարձ. Տ. Բենիկ վարդապետը. խօսելով նահատակութեան մասին։ Բացատրեց թէ ի՞նչ ասել է նահատակութիւն, ո՞րն է գիտակցական նահատակութիւն և ո՞րը տգիտութեան արդիւնք։ Առաջ բերելով օրինակներ շեշտեց՝ որ նահատակ անուան արժանի է նաև Երևանի թեմական դպրանոցը. քանի քանի հաստատութիւններ նորա քոյրերը հարստացան և ապահովեցան. իսկ նա իր 63-ամեայ գոյութեան ընթացքում աչք չբացեց աղքատութիւնից և դեռ էլի առատում է աղքատութեան մէջ։ Ճառը աղդեցիկ տպաւորութիւն գործեց հանդիսականների վերայ։

Ուրաքանչիւր ճառից և ոտանաւորից յետոյ երգեցիկ խումբը երգում էր տօնին յարմար մի երգ, իսկ դպրանոցիս երաժշտական խումբն էլ նուագում էր։

Հանդէսը վերջացաւ Սրբազան Հօր բարեմաղթութեամբ։ Հանդիսականները ցրուեցան խիստ գոհ, զգացուած և ոգևորութեամբ լցուած։

Օրհնեալ լինի Վարդանանց յիշատակը, որ մեր քրիստոնէութիւնը, եկեղեցին ազատեցին հեթանոսութեան ձեռքից։

Հ. Յովակիմեանց

ՏԱՃԿԱՀԱՅՔ.

— Իգեամի մէջ կը կարդանք.

«Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը խընդրեր է որ գաւառներու Հայ վարժարաններու վերաբերեալ գիրքերը առանց մաքսի ղրկուին։ Արդարեւ, օրէնքը կը տրամադրէ որ գիրքերը մաքսէ զերծ մնան, բայց պայմանով որ այն վարժարանը,